

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ**

**Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Շահգալոյանը**

ք.Հրազդան

02.02.2012թ., ժամը՝ 12<sup>00</sup>

**ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝**

- Մարզի խորհրդի անդամ 67 համայնքների ղեկավարներից 55 - ը /բացակայում էին Արուսյան, Նոր Հանրն, Ֆանտան, Զառ, Զովաշեն, Սևաբերդ, Բուժական, Մրգաշեն, Քանաքեռավան, Նոր Երզնկա, Քասախ համայնքների ղեկավարները/
- Վ.Բակլաջյան, Լ.Միքայելյան, Ա.Ղազարյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալներ
- Մ.Գարեգինյան-ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
- Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ
- Մարզի դպրոցների և առողջապահական ընկերությունների տնօրեններ
- Հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ

**ՆԻՍԻՆ ՆԵՐԿԱ ԷԻՆ՝**

- Վ.Տերտերյան – ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ
- Սամվել Միքայելյան - ՀՀ տարածքային կառավարման նախարարության զարգացման ծրագրերի քաժնի առաջատար մասնագետ
- Մ.Վարդանյան – ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետի տեղակալ
- Գ.Գրիգորյան - մարզային փրկարարական վարչության պետ

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

**1.Մարզպետի ՀՀ կառավարություն ներկայացվող ամենամյա հաշվետվության քննարկում:**

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Շահգալոյան/*

**2.Այլ հարցեր:**

**2.1.Մարզի համայնքներում 2011թ. ընթացքում վարչական ֆինանսական հսկողության արդյունքների և համայնքային ծառայության մասին:**

*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ փարսածքային ծառայությունների գործունեության համակարգման վարչության պետ Ս.Հակոբյան/*

**2.2.Տեղական ինքնակառավարման մարմինների և մարզային ոստիկանության վարչության ստորաբաժանումների փոխհամագործակցության վիճակի մասին:**

*/զեկուցող՝ ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետի տեղակալ Մ.Վարդանյան/*

**2.3.Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ուղղությամբ 2011թ. կատարված աշխատանքների և խնդիրների մասին:**

*/զեկուցող՝ Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ Գ.Գրիգորյան/*

**ԼՍԵՑԻՆ՝**

1. ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Շահգալոյանի ՀՀ կառավարություն ներկայացվող ամենամյա հաշվետվությունը:

Ջեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Հաշվետվությունը կցվում է/:

2. Այլ հարցեր:

2.1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ տարածքային ծառայությունների գործունեության համակարգման վարչության պետ Ս. Հակոբյանի զեկուցումը մարզի համայնքներում 2011թ. ընթացքում վարչական ֆինանսական հսկողության արդյունքների և համայնքային ծառայության մասին:

Ջեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

2.2. ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետի տեղակալ Մ. Վարդանյանի զեկուցումը տեղական ինքնակառավարման մարմինների և մարզային ոստիկանության վարչության ստորաբաժանումների փոխհամագործակցության վիճակի մասին:


Ջեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

2.3. Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ Գ. Գրիգորյանի զեկուցումը արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ուղղությամբ 2011թ. կատարված աշխատանքների և խնդիրների մասին:

Ջեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

Ելույթ ունեցավ ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ Վ. Տերտերյանը:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից կատարված աշխատանքները նա գնահատեց դրական, նշելով, որ ՀՀ Կոտայքի մարզը համայնքներում կատարված աշխատանքների առումով մարզերի մեջ գտնվում է առաջին եռյակում: ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմը հանրապետությունում մարզպետարաններից առաջինն էր, որ անցավ գործավարության փաստաթղթաշրջանառության Mulberry էլեկտրոնային տարբերակին: Նա նշեց նաև մարզպետարանի լուրջ հաջողությունները աշխատանքների հրապարակայնության և տեղեկատվության մատչելիության առումով: Վ. Տերտերյանը վստահություն հայտնեց, որ 2012թ. ՀՀ Կոտայքի մարզպետարանը կշարունակի աշխատել առավել արդյունավետ և կունենա ավելի բարձր ցուցանիշներ:

 Կ.ՇԱՀԳԱԼՈՅԱՆ